Իմ ընտանիքում ոչ ոք չի ունեցել արգանդի պարանոցի քաղցկեղ: Նպատակահարմա՞ր է արդյոք իմ պատվաստվելը

Պատասխան.

Այո, նպատակահարմար է: Արգանդի պարանոցի քաղցկեղը ժառանգական հիվանդություն չէ: Եթե Ձեր ընտանիքում չկան այդ հիվանդությամբ տառապող անձինք, դա չի նշանակում, որ հիվանդությունը չի զարգանա Ձեր մոտ:

Ես ունեմ քրոնիկ հիվանդություն: Կարո՞ղ եմ պատվաստվել

Պատասխան.

Հիմնականում՝ այո: Այնուամենայնիվ, ճիշտ կլինի ռիսկերն ու օգուտները քննարկել բուժաշխատողի հետ:

Ցավո՞տ է արդյոք պատվաստումը

Պատասխան.

ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի ներարկումը նման է բոլոր մյուս ներարկումներին: Ներարկման տեղում առաջին ժամերին, մինչև մեկ օր տևողությամբ կարող է լինել արտահայտված ցավ:

Մարմնի ո՞ր հատվածում է կատարվում պատվաստումը

Պատասխան.

ՄՊՎ-ի դեմ պատվաստումը կատարվում է բազկի վերին դրսային հատվածում՝ միջմկանային: Գրեթե բոլոր պատվաստումները կատարվում են մարմնի հենց այդ հատվածում:

Մարդու պապիլոմավիրուսային վարակի (ՄՊՎ) դեմ պատվաստում

Աղջիկների կողմից հաճախակի տրվող հարցեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

NCDC
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ի՞նչ է ՄՊՎ-ն և ինչո՞ւ ես պետք է պատվաստվեմ դրա դեմ

Պատասխան.

Մարդու պապիլոմավիրուսը կամ ՄՊՎ-ն տարածված վիրուս է, որը փոխանցվում է սերտ շփման միջոցով, այդ թվում՝ նաև սեռական ճանապարհով: Առկա է վիրուսի 200-ից ավելի տեսակ, որից 30-ը փոխանցվում է սեռական ճանապարհով: ՄՊՎ վարակը կարող է մի քանի տեսակի քաղցկեղի և սեռական գորտնուկների զարգացման պատճառ հանդիսանալ: Արգանդի պարանոցի քաղցկեղը ՄՊՎ-ով պայմանավորված քաղցկեղների առավել տարածված տեսակներից է, որն ամբողջ աշխարհում 4-րդ ամենատարածված քաղցկեղն է կանանց շրջանում: ՄՊՎ-ի դեմ պատվաստումն էապես նվազեցնում է ՄՊՎ-ով պայմանավորված վարակների և լուրջ հիվանդությունների ձեռքբերման ռիսկը: Ապացուցված է, որ ՄՊՎ-ի դեմ պատվաստումներն անվտանգ են և արդյունավետ:

ՓԱՍՏԵՐ

ՀՀ-ում արգանդի պարանոցի քաղցկեղի տարածվածության մասին

Արգանդի պարանոցի քաղցկեղի (ԱՊՔ) վիճակագրությունը ՀՀ-ում

	Հաշվառված դեպքեր	Նոր հայտնաբերված հիվանդներ	Մահ
2015	3030	257	130
2016	2990	243	115

Մեր երկրում

Յուրաքանչյուր տարի 100 հազար կնոջից՝
- ✓ 15-ի մոտ ախտորոշվում է ԱՊՔ
- ✓ 8-ը մահանում է ԱՊՔ-ից

- ✓ Ամեն 36 ժամը մեկ մեկ կնոջ մոտ ախտորոշվում է ԱՊՔ
- ✓ Ամեն 72 ժամը մեկ 1 կին մահանում է ԱՊՔ-ից

ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ

ՄՊՎ-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ Է ԱՐԳԱՆԴԻ ՊԱՐԱՆՈՑԻ ՔԱՂՑԿԵՂԸ

- Տարեկան շուրջ 266 000 կին մահանում է արգանդի պարանոցի քաղցկեղից՝ մահերի 85%-ը արձանագրվում է զարգացող երկրներում:
- Մարդու պապիլոմավիրուսի դեմ պատվաստանյութը կանխարգելում է ՄՊՎ-ի 16 ը 18 տիպերը, որոնք արգանդի պարանոցի քաղցկեղի 70%-ի պատճառ են հանդիսանում:

- 2017 թվականի դրությամբ կատարվել է ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի ավելի քան 270 000 000 դեղաչափ, որի արդյունքում ապացուցվել է պատվաստանյութի անվտանգությունը:
- ՄՊՎ—ի դեմ պատվաստումներից հետո Կանադայում արգանդի պարանոցի ախտաբանական փոփոխությունները նվազել են 44% -ով, սեռական գորտնուկները՝ 95 %-ով:
- Շոտլանդիայում (Միացյալ Թագավորություն) արգանդի պարանոցի ախտաբանական փոփոխությունները նվազել են 50 % -ով, սեռական գորտնուկները՝ 95 %-ով:

Ի՞նչ կպատահի, եթե չպատվաստվեմ ՄՊՎ-ի դեմ

Պատասխան.

Չնայած ՄՊՎ վարակներից շատերը (մոտ 70-90%) ինքնաբերաբար վերանում են, այնուամենայնիվ որոշ դեպքերում վիրուսը կարող է մնալ օրգանիզմում և առաջացնել տարբեր հիվանդություններ, նախաքաղցկեղային վիճակներ, իսկ հետագայում՝ տարիներ և անգամ տասնամյակներ անց՝ քաղցկեղ: Առկա են ՄՊՎ-ի մի քանի տեսակներ և մեկ տեսակից ազատվելով՝ անձը կարող է ապագայում նորից վարակվել ՄՊՎ-ի մեկ այլ տեսակով: ՄՊՎ-ով պայմանավորված առավել տարածված հիվանդությունն արգանդի պարանոցի քաղցկեղն է, սակայն վիրուսը կարող է առաջացնել նաև արտաքին սեռական օրգանների, կոկորդի և շնչափողի քաղցկեղ, ինչպես նաև սեռական գորտնուկներ:

Նպատակահարմա՞ր է արդյոք 14 տարեկանից բարձր տարիքի աղջիկների պատվաստումը

Պատասխան.

Այո, պատվաստումը նպատակահարմար է, սակայն պատվաստանյութի արդյունավետությունը կախված է Ձեր տարիքից և Ձեր մոտ ՄՊՎ-ի առկայությունից:

Ձեր օրգանիզմի պատվաստանյութի նկատմամբ իմունային պատասխանն ավելի ուժեղ կլինի, եթե պատվաստում ստանաք առաջարկվող տարիքում:

Այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տվել, որ մինչև 45 տարեկան անձանց շրջանում պատվաստումներն անվտանգ և արդյունավետ են ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութում առկա ցանկացած տեսակի նկատմամբ, որոնցով վերջիններս չեն վարակվել մինչև պատվաստվելը:

Սա է պատճառը, որ որոշ երկրներում պատվաստումներն իրականացվում են նաև առաջարկված տարիքային խմբից բարձր տարիքի անձանց շրջանում:

Հիշե՛ք, եթե ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի առաջին դեղաչափը ստանում եք 15 տարեկանից հետո, անհրաժեշտ է ոչ թե 2, այլ 3 դեղաչափ՝ ապահովելու ամբողջական պաշտպանություն: